

րու հայ քանաստեղծական արտայայտութեան: Այս կէտին պիտի դառնանք աւելի ուշ:

Միւս թարգմանիչը Իլիականի՝ Համազասպ Համբարձումեան, 44 տարիներ ետք՝ տուած է նոյն դործին ուրիշ տեսակ հայացում մը, ինքն ալ թէեւ կը թուի Բագրատունիէն տարուած ինչ ինչ բառերու դործածութեան մէջ, բայց շատ աւելի անկախ է. իր արեւելահայերէնն ալ պատճառ եղած է անշուշտ այս անկախութեան. բայց ինչպէս ցոյց տրուեցաւ, ունի կարգ մը տողերու վրայ բնագրային անհաւատարմութիւններ, թեթեւ կամ ծանր մեղանշումներով:

Ղազիկեանի թարգմանութիւնը, հիմնուած Բագրատունիի խղճամիտ հաւատարմութեան վրայ բնագրին հանդէպ, պիտի ըլլար այսօր մեր լաւագոյն աշխարհաբար վերածումը, սահուն, ընթացիկ ու թեթեւ իր քալուածքով, եթէ անկէ թօթափած ըլլար այն բոլոր դրաբարեան հետքերը եւ ձեւերը՝ որ զայն ոչ միայն կը ծանրացնեն, այլ եւ կը զրկեն գեղարուեստագէտ թարգմանիչի մը համար անհրաժեշտ անձնական դրոշմէն:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

Հ. ՆԵՐՍԷՍ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՈՒՂԵՌՈՐՈՒԹԻՒՆԸ

ԴԷՊՈՒ ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՀԱՅՔ

(1843 - 1853)

Բազմավէպի անցեալ տարուան թիւերուն մէջ հրատարակուեցան Հ. Ղեւոնդ Ալիշանի եւ Հ. Ներսէս Սարգիսեանի թղթակցութիւնը. եւ որովհետեւ մեր ընթերցողներէն ոմանք փափաք յայտնեցին աւելի մօտէն ճանչնալ Սարգիսեանի անձն ու դործունէութիւնը, մանաւանդ անոր դէպի Հայաստան կատարած գիտական ուղեւորութիւնը եւ ձեռք բերած արդիւնքը, պիտի ջանանք հիւսել հոս անոր պատմութիւնը, հիմնուելով իր գրած նամակներուն, ինչպէս նաեւ յարակից զիւանական թուղթերու վրայ:

Մխիթարեան Միաբանութիւնը իր դոյութեան առաջին վայրկեանէն իսկ ըմբռնած էր թէ Հայութիւնը փրկելու գլխաւոր ազդակներէն մէկը՝ կառչած մնալն էր անոր սրբազան աւանդութիւններուն, յիշատակներուն, պատմութեան, եւ ինչ որ հեռաւոր կերպով մ'իսկ կապ ունեցած է անոր անունին հետ: Վառ է իւրաքանչիւր Մխիթարեանի մէջ այս նուիրական դադափարականը, որ կու գայ նոյն ինքն երանաշնորհ Հիմնադրէն, Մխիթար Աբբայէն, որ յաջողած էր իր հոգին տոգորել աշակերտներուն մէջ, եւ որոնք նախանձախնդիր կերպով պահպանած են զայն ու աւանդած յաջորդ սերունդներուն:

Այս ճշմարտութեան մէկ կենդանի ապացոյցն է ձեռագրի հանդէպ պաշտամունքը՝ որ ունի ամէն միաբան. բաւական է մտածելը թէ ցարդ Միաբանութիւնը ունեցած է հազիւ երեք հարիւր միաբան, ու ներկայիս Մխիթարեան մատենադարան կը հանգչին երեք հազարէ աւելի ձեռագիրներ, իրենց ճոխ բովանդակութեամբ: Մխիթար Աբբահայր նախ ինքը անձամբ ձեռք բերած է կարեւոր գրչագիրներ ու իր հետ բերած Ս. Ղազար. ապա յաջորդաբար իր աշակերտներուն գրած նամակներուն մէջ միշտ կը յանձնարարէ հետամուտ ըլլալ ձեռագիրներ հաւաքելու դործին. Մխիթար Աբբահայր յիսնամեայ արքայութեան շրջանին հարիւրէ աւելի ձեռագիրներ կը հաս-

անգամն էր որ. Սարգիսեան կը բաժնուէր Ս. Ղազարէն: Քսանմէկ տարիներ առաջ եկած էր. մայրը Տրապիզոնէն լսելով որդւոյն դաւաճողը կը գրէ. «Ո՛հ իմ երջանկութեանս... Ի՞նչ կ'ըլլայ այն մօրը քսանմէկ տարւան կարօտալից սիրտը, երբոր գիրդ կը բանայ ու... կը լսէ...: Շարժեցիր որդեակ, շարժեցիր այն 21 տարւան դադրած հալած ու մաշած սիրտը նոյն գիրովդ...»⁸:

Մեծ է երկու ուղեւորներու պատրաստութիւնը, հոգեպէս պատրաստ են դիմադրաւելու որեւէ դժուարութիւն եւ նեղութիւն: Գիտական կերպով ալ Սարգիսեան զինուած է. պատրաստած է Ս. Ղազարի 1600է աւելի ձեռագիրներու ցանկերը, աչքի առջեւ ունի անոնց պարունակութիւնը, դասաւորած է հայրախօսական գրութիւնները, կիսատ ճառերու ցանկերը, շարքին մէջ պակսող այս կամ այն ճառը, պատմական գիրքերու մէջ ստուգելիք բառերը կամ հատուածները: Ճամբայ չեղած յստակ կերպով կ'ընդգծէ իր ուղեւորութեան համար որդեգրած սկզբունքը. «Եւ զայս եւս գիտեա, սիրելի, զի ուստի ձայն ձեռագրաց հասեալ է յունկն իմ եւ հասցէ, թէ եւ ի ծագաւ աշխարհի եւ Տէր ընդ իս իցէ, հարկ է անձամբ ականատես լինել ամենայնի, մանր զննել զամենայն, եւ չթողուլ ուրեք տող մի բան որ առ մեզ պակասիցի, զի իմ իղձք այն են, թէ մատենադարան սրբոյն Ղազարու պատգամատու լիցի իմաստունն Եւրոպայ եւ համօրէն աղբիս զամենայն հնութեանց պատմականացն եւ վարդապետականաց՝ առ ի նախնեաց մերոց հասելոց առ մեզ»⁹: Մէկ խօսքով Սարգիսեան գիտակից է իր կատարած ուղեւորութեան լրջութեան, ու իր հէտ բոլոր միաբանները մեծամեծ յոյսերով կը մաղթեն իրեն բարի ճամբորդութիւն¹⁰:

ԶՄԻՒՌՆԻԱ

Քանի մը օր Թրիեստ մնալէ ետք «յետ տասնօրեայ մրրկալից ճանապարհորդութեան»¹¹, 1843ի Նոյեմբեր ամսուն երկրորդ կէսին կը հասնին Չմիւռնիա, ուր պիտի մնան հինգ ամիսներ: Նոյն չըջա-

8. Լուչիա Սարգիսեան Տրապիզոնէն, 17 Նոյեմբ. 1843ին, առ Հ. Ն. Սարգիսեան, Չմիւռնիա:

9. Սարգիսեան Հ. Ն. Չմիւռնիայէն, 27 Փետր. 1844ին, առ Հ. Ստեփան Նազըճեան, Վենետիկ:

10. Հ. Նեբոէս Սարգիսեան Տրապիզոնցի, Ս. Ղազար մտած է 1823 Հոկտ. 24ին, 23 տարեկան հասակին: Շատ հաւանաբար սկիզբէն ի վեր ունեցած է յատուկ սէր ձեռագիրներու եւ հնութիւններու հանդէպ. ասոր մէկ ապացոյցն է Տրապիզոնէն Ս. Ղազար հետք բերած 1469 Թուականի ձեռագիր դանձարանը (Ձեռ. Թիւ 1662), որու սկիզբը նշանակուած է իր մկրտութեան անունը, այսինքն «Նարայր Սարգիս Սարգիսեանն երեք ի Տրապիզոնէ. 1823»:

11. Սարգիսեան Հ. Ն. Չմիւռնիայէն, 27 Նոյեմբ. 1943ին, առ Արքահայրն Սուրբիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

նին Չմիւռնիոյ մէջ Հայ գաղութը կարելի է ըսել իր ամէնէն ծաղկեալ շրջանին մէջ էր, դեռ նոր կազմակերպուած էր Սիւնեաց ընկերութիւնը, կը փայլէր Մեսրոպեան վարժարանը, որոնց մասին անցողիկ կերպով անդրադարձած է Սարգիսեան իր տպագիր հատորին մէջ¹², բայց Չմիւռնիայէն գրած նամակները լի են ազատ ու անվերապահ արտայայտութիւններով:

Մեսրոպեան վարժարանը 1843ին գրեթէ քառասուն տարուան կեանք ունէր, ու Մոսկուայէն եկող այցելուներու համաձայն կը գերազանցէր Ղազարեան վարժարանը ու Պոլսոյ որեւէ մէկ հայկական դպրոց: Կը սորվէին յունարէն, տաճկերէն, իտալերէն, ֆրանսերէն ու անգլերէն, սակայն անգերազանցելի էր հայկական լեզուի ուսուցումը: Մանուկներուն մէջ կը տողորէին ամէնէն գլխաւորը, այսինքն հայկական ուսումին հանդէպ սէրը, այնպէս որ ինքնաբերաբար կը ստեղծուի մէջերնին կանառական հոգին. «Հանապազ յանմահ յիշատակս նախնեաց պարապեալք վերձանութեամբ, ոմն Արամաւ պարծի, ոմն Տիգրանաւ եւ միւս ոմն Պարուրաւ, եւ այլք նման նոցին անմահօքն: Մի ոք զայսոսիկ թեթեւ ինչ կամ մանկուոյ խաղ համարեցի, զի յանդիական հասակին անմահ հնասիրութեանն պարծանք, կայծակն է ընդ փոշուով Թաղեալ, եւ ժամանակին է Թօթափել անտի դիոշին եւ կայծակն հրաբորբոք արծարծեցէ անշէջ»¹³: Սարգիսեան յափշտակուած կ'ունկնդրէ անոնց խօսակցութիւններուն. «չիլիս ոք ի նոցանէ նոր ինչ ոճ կամ բառ վարել ի դրածս իւր՝ չեւ տեսեալ ի մերսն. Թող, ասեն, տեսցուք եթէ վենետիկեան ճեմարանն աղբիս վաւեր համարիցի՞ զայս եւ զայն ինչ նոր բան, ապա հետեւեցուք եւ մեք անխիղճ»¹⁴: Այնքան վառուած են ազգասիրութեամբ որ անյազօրէն կը կարգան նախնեաց մատենադրութիւնը, «նպատակ եղեալ առաջի իւրեանց, զօր ամենայն նոքօք քաղցրանան ի բանս իւրեանց». այս ոգին կը մնայ անոնց մէջ նաեւ վարժարանը աւարտելուն. աշակերտներու վկայութեան համաձայն իրենց զարգանալու սկզբնապատճառը Միւթարեան Միաբանութիւնն է: Ընթերցասիրութիւնը այնքան սաստիկ էր անոնց մէջ որ օրը օրին կը սպասէին նոր գիրքերու, «քանզի ծանօթ են սոքա Հոմերի, Վիրգիլեայ, Գաղլիոյ եւ այլոց եւս պատմութեանց, ի դրոց լեզու եւ ոչ ուսմիօրէն»¹⁵: Դեռ

12. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Ն., Տեղագրութիւնք ի փոքր եւ ի մեծ Հայս, Վենետիկ 1864, էջ 11-12:

13. Սարգիսեան Հ. Ն. Չմիւռնիայէն, (անթուական) առ Արքահայրն Սուրբիաս Թրիեստ:

14. Սարգիսեան Հ. Ն. Չմիւռնիայէն, 26 Դեկտ. 1843ին, առ Արքահայրն Սուրբիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

15. Սարգիսեան Հ. Ն. Չմիւռնիայէն, 5 Յունուար 1844ին, առ Հ. Յովհաննէս Սուրբիաս, Վենետիկ:

նոր սկսած էր Բաղմալէպի տպագրութիւնը, եւ ծարաւով կը սպասէին անոր մէջ գտնել նոր քերթուածներ. կը նախընտրէին Տելեմաք եւ Միլտոնէն որեւէ հատուած: Մտածել որ հինգ ամսուան ընթացքին Սարգիսեան Ձմիւռնիոյ մէջ կը սպառէ 30 Եղիշէի Պատմութիւն, 30 Հոմերոս, 20 Եղիշէի, 10 Խորենացի, 10 Աղաթանգեղոս, 10 Ներսէս Շնորհալուոյ Թուղթք, 3 Խորենացիի Մատենադրութիւնք, 5 Խտալերէն լեզուով Խորենացի, 5 Խտալերէն լեզուով Աղաթանգեղոս, 2 Ֆրանսերէն լեզուով Խորենացի, 2 Տելեմաք: 1844ի Մարտ ամսուն Սարգիսեան ներկայ կը դառնուի աշակերտներու քննութեան «հրաւիրեալք ի նոցանէ»¹⁶ եւ շատ դժուար կը մնայ արդիւնքէն, վկայելով թէ «ցորչափ այս եռանդն ի նոսա իցէ, կարծեմ գերազանցեսցեն եւ զմոսկովցիս ոչ միայն կարգաւորութեանն մասամբ այլ եւ համբաւով եւս»¹⁷:

Ձմիւռնիոյ եւ չրջակայ վայրերու հայկական վարժարաններու զարգացումին փոյթն ու հոգը ստանձնած էր Սիւնեաց ընկերութիւնը¹⁸, որու անդամները գիտակից կերպով նուիրուած էին հայ մշակոյթին զարգացումին¹⁹: Ընկերութեան անդամներուն մէջ կը գտնուէին անգրագէտներ, սակայն անգերազանցելի կերպով վառուած ազգասիրութեամբ²⁰ իրենց ձիրքերը ու նոյն իսկ հարստութիւնը տրա-

16. Սարգիսեան Հ. Ն. Ձմիւռնիայէն, 22 Մարտ 1844ին, առ Հ. Գեորգ Հիւրմիւղեան, Պոլիս:

17. Անդ:

18. Սիւնեաց ընկերութեան անդամները Հ. Գրիգորի վկայութեան համաձայն «թէ պէտեւ փոքրիկ են թուով, այսինքն չորս հազարիւ չափ միայն, այլ գործքն եւ արարք մեծամեծք, միութիւն անխզելի, ուսումնասիրութիւն անչափ, յարգութիւն եւ յառաջադիմութիւն անկարծելի. չիք ոք ի քաղաքիս որ ոչ գովեսցէ զնոսա...: Զորոյց մեծ յածի ի միջի սոցա ի կանգնել զթաղաւորութիւն Հայոց, վասն այսորիկ առաքեալ դեսպան ի Կ. Պոլիս զՂուկաս Պալտասարեան առանձին ծախիւք հասարակաց, զի խօսեսցի ընդ անգլիացի դեսպանին եւ ընդ մեծամեծաց երկոցունց կողմանց ազգիս, եւ խոստումն մեծ ընկալեալ ի դեսպանէն այսպէս թէ Դուք ջանացարուք պատրաստել եւ այլ մի ինչ հոգայք, ամենայն ինչ բարեւոք յարողեսցի ի սուղ ժամանակի» (25 Դեկտ. 1843ին, առ Հ. Ստեփան Եազըճեան, Վենետիկ):

19. Հ. Ն. Սարգիսեանի ձեռագիր Թուղթերուն մէջ կը գտնենք պիտակ մը, ուր նշանակուած են զընկերք Սիւնեաց միաբանութեան. ա. Խումարեան Յոհաննէս, Բ. Խալայեան Ստեփան, Գ. Պալտասարեան Ստեփան, Դ. Նուպարեան Յոհաննէս, Ե. Նուպարեան Առաքել, Զ. Տիլպերեան Յոհաննէս, Է. Թարգմանեան Ղուկաս, Ը. Բաղասարեան Ղուկաս, Թ. Մահմէտի Մալխաս, Ժ. Անդրէաս վարժապետ Փափագեան, Ժա. Մարկոսեան Սարգիս, ԺԲ. Մարկոսեան Գրիգոր, ԺԳ. Սիմոնաքի Յակոբ, ԺԴ. Էջիգեան Յակոբ, ԺԵ. Ապրոյեան Գրիգոր: Վարժիչք Մեսրոպեան դպրատան. Անդրէաս (Ռուբէն) Փափագեան վարժապետ, Գրիգոր Տէր Յոհաննէս, Յոհաննէս Շահինեան վանեցի, Յոհաննէս Յոհանեան քրդաղաճցի:

20. Ազգասիրութեան ապացոյց մըն է մտածելն հոմանք ի նոցանէ զչարս դիւցազանց Խորենացւոյն եւ այլոց առանձին առանձին պատկերս տալ փորագրել կամ վիճառի առնել ի ձեռն Միաբանութեան մերոյ, որպէսզի, ասեն, ի տունս

մադրած էին յառաջ վարելու աղքատիւական գաղափարները. «յա-մենայն եօթնեակս միանգամ ի մի վայր ժողովին տեսանել եւ խորհել որ ինչ պէտք են օր ըստ օրէ զարգանալոյ դպրոցաց ոչ միայն քաղաքիս այլ եւ չրջակայ տեղեաց, յորս առաքեն աստի մանկունս քաջակիրթս առ ի վարժապետել»²¹:

Յիշատակութեան արժանի է, ի պատիւ երկու Միւթարեան հիւրերուն, Սիւնեաց ընկերութեան կողմէ սարքուած հացկերոյթը «ի տան միում ի փառաւորադունից քաղաքիս, փառաւոր քան զոր առաւել չմարթի լինել թէ չսխալեմ»²². կը հրաւիրուի նաեւ քաղաքին արքեպիսկոպոսը Մատթէոս Իզմիրլեան, Պոլսոյ ապագայ պատրիարքը, որ խօսք առնելով «ճառ արկեալ զհիմնադրէս եւ զուխտէս՝ խօսեցաւ բանս դովեստից առաւել քան զոր մեքս սովոր եմք խօսել ի միջի մերում, եւ կնքեաց զբանն թէ՝ Դուք մայր եւ դայեակ իմաստութեան, լոյս անաղօտ ամենայն պայծառութեան աղբիս յոր վայելեմքս, եւ հանդերձելոյ փառաւորութեան նոցին՝ որում ակն ունիմք, եւ զայս անկեղծ խոստովանութիւն, ասէ, թող նա միայն չդաւանեսցէ, որում չիք աչք եւ ոչ միտք եւ ոչ բանականութիւն»²³: Կը յաջորդեն բաժակաճառերը եւ կեցցէներու շարքը, նախ նորընտիր կաթողիկոս Ներսէս Աշտարկեցիի, ապա «կեցցէ Արքահայրն Վենետիկեան եւ Սիւնեաց ընկերութիւնս ընդ հովանեաւ նորա մինչեւ ի սպառ» եւ որովհետեւ նոյն օրը հասած էր Բաղմալէպը²⁴, ուր կար Ալիշանի մէկ գրութիւնը, «կեցցէ հեղինակն ճառին եղծման անմիաբանութեան Հայոց՝ Հայր Ղեւոնդ. եւ աղաղակեցին զկեցցէն, մինչեւ ասել ոմանց՝ Ոսկի գրիչ պարզելի արժանաւոր է Հ. Ղեւոնդ»²⁵, «եւ այլք՝ նոր իմն Սահակ»²⁶:

Մտածել որ Ալիշան երեք տարուան արեղայ էր երբ Ձմիւռնիոյ մէջ կը խլէր կեցցէները:

Սկզբնական ծրագրով մեր երկու ուղեւորները Ձմիւռնիա երկար

մեր՝ մեր դիւցաղունը լիցին զարդք որմոցն եւ մի՛ օտարքն» (Սարգիսեան Հ. Ն. 5 Յունուար 1844ին, առ Հ. Յ. Սորկուճեան, Վիեննա):

21. Սարգիսեան Հ. Ն. Ձմիւռնիայէն, 26 Դեկտ. 1843ին, առ Արքահայրն Սուրբիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

22. Անդ:

23. Անդ:

24. 1843 Հոկտ. 5ին, Վենետիկի Ռափայէլեան վարժարանի հանդէսի ընթացքին, Ալիշան կարդացած էր իր մէկ ճառը, եղծ կարծեաց անմիաբանութեամբ Հայոց, որ առանց ստորագրութեան լոյս պիտի տեսնէր Բաղմալէպին մէջ. առաջին մասը հրատարակուած է 1843, Թիւ 20, էջ 317-320, երկրորդ մասը՝ 1843, Թիւ 21, էջ 334-336:

25. Սարգիսեան Հ. Ն. Ձմիւռնիայէն, 26 Դեկտ. 1843ին, առ Արքահայրն Սուրբիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

26. Ալեքսանդրեան Հ. Գ. Ձմիւռնիայէն, 25 Դեկտ. 1843ին, առ Հ. Ստեփան Եազըճեան, Վենետիկ:

մնալու միտք չընէին, սակայն տեսնելով որ ձեռագիրներ եւ հնութիւններ հաւաքելու դործը օրը օրին դեռ աւելի յաջողութիւն կ'ունենայ, կը յետաձգեն իրենց մեկնումը: Մատթէոս արքեպիսկոպոս Միաբանութեանս կը նուիրէ հինգ ձեռագիր, փոխարէն խնդրելով Հայկազեան բառարան մը: Նմանապէս ուրիշ աղբիւրէ ձեռք կը բերեն վեց ձեռագիրներ, ինչ որ մեծ դոհունակութիւն էր Սարգիսեանի սրտին: Կ'իմանան թէ Ապրոյեան ընտանիքին քով կը գտնուի շատ զեղեցիկ աստուածաշունչ մը, դրուած ՌՂԶ (1647)ին: Մեր երկու ուղեւորները շատ հետամուտ կ'ըլլան ձեռք բերել զայն՝ Աստուածատուր Ապրոյեան սեփականատէրէն, սակայն «մատեանն չկարացի առնուի ի ձեռաց առնն հնապաշտի, եւ ոչ միայն չէառ յանձն տալ յղել այդր ի վենետիկ»՝ վասն բաղդատութեան եւ վերստին դարձուցանելոյ առ նա ինքն, այլ եւ չկամի եւ ոչ իսկ ընդ դուռնն մաղաղային իւրոյ արտաքս հանել»²⁷: Ու վերջապէս մտածել որ շուրջ 80 տարի ետք, 1923ին, նոյն Ապրոյեան ընտանիքը ինքնայօժար պիտի նուիրէր այդ աստուածաշունչը Ս. Ղազարի մատենադարանին²⁸:

Բացի ձեռագիրներէ հետամուտ են ստանալ հին դրամներ. դեռ ամիս մը չանցած, Ս. Ղազար կը զրկեն 18 հին դրամ, «յորոց հինգ պղնձի եւ 13 արծաթի. յարծաթեղինացն վեցեքին փաթութեալ թըղթով ընտիրք են, վկայեալ ի քաջ հնագիտաց»²⁹. այս բոլոր դրամները գտնուած են Պուրսայի մէջ, եւ վեց արծաթէ դրամները «քնտրելագոյնք եւ սակաւագիւտք, որ ետու քննել համբաւաւոր հնագիտի առն անդղիացւոյ Պօրէլեա»³⁰: Սիւնեաց ընկերութեան հետ ունեցած ջերմ յարաբերութենէն ալ՝ հաւանաբար Սարգիսեան ձեռք ձգած ըլլայ ինչ ինչ դրամներ, որովհետեւ տեսնելով թէ անոնց դրաման մէջ կը պակսի Չամչեանի եռահատոր պատմութիւնը եւ Աւետիքեանի Բացատրութիւն շարականացը, կը մտածէ նուիրել օրինակ մը, «յորմէ ակն ունիմք առնուլ ինչ ինչ ի հին դրամոց եկելոց ի Հայաստանէ, զորոց գտեալ ասի յաւերակս Արտաշատու»³¹: Չենք գիտեր թէ յիշեալ դրամները յաջորդաբար ստացա՞ծ են: 1844 Ապրիլ 12ին, Չմիւռնիա քաղաքը վերջնական կերպով ձգելէ առաջ, Ս. Ղա-

27. Սարգիսեան Հ. Ն. Չմիւռնիայէն, 12 Ապրիլ 1844ին, առ Արքայայրն Սուրբիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

28. Ապրոյեան Աստուածաշունչը մտած է Ս. Ղազարի մատենադարանը 1923 Յունուար 12ին, Հ. Գերորէ Զրաքեանի ձեռքով:

29. Սարգիսեան Հ. Ն. Չմիւռնիայէն, 12 Ապրիլ 1844ին, առ Արքայայրն Սուրբիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

30. Աւետիքեան Հ. Գ. Չմիւռնիայէն, 27 Դեկտ. 1843ին, առ Հ. Ստեփան Եաղըճեան, Վենետիկ:

31. Սարգիսեան Հ. Ն. Չմիւռնիայէն, 26 Դեկտ. 1843ին, առ Արքայայրն Սուրբիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

զար կը զրկէ դրամներու երկրորդ խումբ մը, 17 կտոր, որոնցմէ «5 արծաթի դրամք, 2 պղնձի եւ 1 քամէօ. նոյնպէս 9 պղնձի մանր դրամք՝ ընծայ ի Մեսրոպեան դպրոցէն»³²:

Ձեռագիրէ ու դրամէ զատ՝ Սարգիսեան եւ իր ընկերը Ս. Ղազար կը զրկեն ինչ ինչ հնութիւններ. այսպէս 1843ի Դեկտեմբեր ամսուն կ'այցելեն Եփեսոս, եւ աւերակներու մէջ կը գտնեն «փոքր վերնախարիսի մի կարմրադոյն»³³: Յաջորդաբար Պաղոս լեռան դազաթը՝ Դղեակ (տաճկերէն՝ իսյոյէֆէ դալէսի) անունով աւերակներու մէջէն «խորտակեալ խեցեղէն պատկերս եւ անօթս (...) եւ բարձրաքանդակ դուռն մի խեցի, ըստ իս ընտրելագոյն քան դմիւս խեցեղէնս, նոյնպէս գիւտ իսյոյէֆէի»³⁴: 1844 Ապրիլ 13ին մեր երկու ճամբորդները կը ձգեն Չմիւռնիան ու նաւով կ'ուղղուին դէպի Տրապիզոն. բայց որովհետեւ նպատակին գիտական ու դրական է, կամաւոր կերպով կ'երկարեն ճամբանին, ցամաքային ուղեւորութեամբ անցնելով հայաշատ կեդրոններէ, այսինքն Այասուրուք, Էրտէկ, Պանտըրմա, Մուհալլե, Պրուսա, Կէմէլիկ, Նիկոմիդիա, Արմաշ, Ատափազար, Նամէրտ Գէօփրիւսիւ, Պիլէճիք, Կուտինա, Չապուր, Էսկիշէհիւր, Անկիւրիա, Մարգուան, Ամասիա, Եւդոկիա, Կոմանա, Սեբաստիա, Շապին Գարահիսար, Կիւմիւշխանէ, Տրապիզոն: Այս երկար ճամբուն համար պիտի յատկացնեն ութը երկար ամիսներ, 1844 տարուան Ապրիլէն Դեկտեմբեր, միշտ զրիչը ձեռքին, որովհետեւ «զաշխարհադրական ստորագրութիւն տեղեաց իւրաքանչիւր շարաշարեալ գրեմ անդադար»³⁵: Թէեւ հրատարակուած է Սարգիսեանի տեղագրութիւնը, սակայն ինչ ինչ մանրամասնութիւններ կարելի չէ հոն գտնել:

ԱՐՄԱՇ

1844 Յունիս 17ին, Հ. Ներսէս եւ Հ. Գրիգոր կը մտնեն «ի հրաշակաւոր մենաստանն Արմաշու», որու առաջնորդն էր Պօլսոյ նախկին Պատրիարք Ստեփանոս վրդ. Աղաւնի, փոխանորդ ունենալով Պրուսացի Պօղոս Եպս. Թաքթաքեան «կառավար ամենայն իրաց». վանքին մէջ կը գտնեն տասի չափ միաբաններ, որոնք բոլորն ալ դըր-

32. Սարգիսեան Հ. Ն. Չմիւռնիայէն, 12 Ապրիլ 1844ին, առ Հ. Ստեփան Եաղըճեան, Վենետիկ:

33. Սարգիսեան Հ. Ն. Չմիւռնիայէն, 26 Դեկտ. 1843ին, առ Հ. Ստեփան Եաղըճեան, Վենետիկ:

34. Սարգիսեան Հ. Ն. Չմիւռնիայէն, 12 Ապրիլ 1844ին, առ Հ. Ստեփան Եաղըճեան, Վենետիկ:

35. Սարգիսեան Հ. Ն. Կուտինայէն, 3 Օգոստ. 1844ին, առ Արքայայրն Սուրբիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

կարաց կ'ընդունին Մխիթարեան երկու ուղեւորները, խոստովանելով թէ «մինչդեռ յերկնից խնդրէաք այցելութիւն, յերկրի առ մեզ գտաք»³⁶:

Նոյն այս շրջանը՝ Արմաշի վանքին ամէնէն ծաղկեալ տարիներն էին, որովհետեւ վանքին մէջ հաստատած էին վարժարան մը, նպատակ ունենալով կրթել գեղջուկ մանուկները, պատրաստել վարժապետներ ու զրկել շրջակայ գիւղերը՝ դպրոցներ բանալու համար: Իտալիայէն բերել տուած էին յատուկ վարժապետ մը՝ հրահանգելու համար աշակերտութիւնը եւրոպական ուսումններով: Արմաշի վանքին կազմակերպութիւններուն շնորհիւ «չիք գիւղ Հայոց ի թեմի սոցա, որ աւելի են քան գերեսուն, յորում չիցէ դպրոց, ըստ տանելոյ գեղջկական վիճակի»³⁷:

Մեր երկու հիւրերը գրեթէ տասնըհինգ օր կը մնան Արմաշ, վայելելով յատուկ սէր ու գուրգուրանք, մանաւանդ Թաքթաքեան սրբազանէն, որ կը ջանար Արմաշի վանքը դարձնել գիտական բարձր մակարդակով կեդրոն մը, եւ այս պատճառով իսկ ժամեր ամբողջ կը հարցաքննէ Մխիթարեան Հայրերը, կը տեղեկանայ Ս. Ղազարի կղերիկոսներու տրուած դաստիարակութեան մասին: «Բազում ինչ զմերոյ ոճոյ ուսմանն եւ վանական կրթութեանց եհարց, ա'ռ եւ ի գիր արձանացոյց»³⁸: Պատմութիւն եւ սահմանադրութիւն Արմաշի վանքին մէջ եւս կը գտնենք հետաքրքրական տեղեկութիւն մը: «Սոյն միջոցին Վենետիկ միաբաններէն Հ. Ներսէս Տրապիզոնցի եւ Հ. Գրիգոր Պոլսեցի վարդապետները եկան ի վանս, եւ տասնըհինգ օրի չափ մնալով, ուսումնարանի բարեկարգութեան համար կանոններ եւ հրահանգներ տուին. նաեւ մէն մի աշակերտաց համար ալ գիշերուան մինակ ննջելու առթիւ մէյ մէկ խցիկ շինել տուին»³⁹:

Բնականաբար Սարգիսեանի ամբողջ մտահոգութիւնը վանքի գլուխաւորներն էին. առաջնորդին եւ վանականներու թոյլտուութեամբ «զննեցի զամենայն գրչագիրսն, թուով յոյժ սակաւ»⁴⁰, մինչ ինքը լսած էր թէ հազարաւոր ձեռագիրներ ամբարուած կը սպասեն իրեն: Ստուգիւ կը գտնէր հազարի չափ հատորներ, որոնց մեծամասնութիւնը տպագիր եւ կամ ծանօթ պարունակութեամբ գրչագիրներ էին, ինչպէս Գիրք պարապմանց, երկու ճառընտիրներ, Իգնատիոս, Կիւրեղ Աղեքսանդրացիի Մեկնութիւն Ղուկասու, Ներսէս Շնորհալիի Ճառք հրեշտակաց, Նանայ, Գրիգոր Տաթեւացիի լուծմունք Յորայ,

36. Անդ:

37. Անդ:

38. Անդ:

39. Հասկ (Անթիլիաս), 1972, Թիւ 1-2, էջ 25:

40. Սարգիսեան Հ. Ն. Կուտինայէն, 3 Օգոստ. 1844ին, առ Արքահայրն Սուրբիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

զանազան խեղճ թարգմանութիւններ Տէր-Կարապետեանի, անթիւ շարակնոցներ ու մաշտոցներ: Սարգիսեանի ուշադրութիւնը կը գրաւէ Գրիգոր Նիւսացիի մէկ ձեռագիրը, ու ժամանակի սղութեան պատճառով այնպէս մը կը կարդադրէ որ Թաքթաքեան սրբազանի ձեռքով ձեռագիրը կը զրկէ Պոլիս, որպէսզի հոն իր միաբանակիցներէն Հ. Գէորգ Հիւրմուզեան օրինակէ հարկաւորը եւ ձեռագիրը դարձնէ Արմաշ: Դիտելի է Սարգիսեանի ուշադրութիւնն ու խնամքը նկատմամբ օրինակուելիք ճառերուն. յատուկ կերպով կը մատնանչէ թէ ձեռագրին ո՞ր մասերը հարկաւոր են Ս. Ղազարի ձեռագրական հաւաքածոյին համար. «օրինակելիքն ի մատենէն են ինն երանութեանց գիրքն, Ժողովի մեկնութիւնն եւ լուծմունքն յինն երանութիւնս: Իսկ կուսութեան գիրքն եւ երգ երգոցն հարկաւոր չեն, զի կան եւ առ մեզ, սակայն եթէ կամիք թող օրինակեսցի եւ երգ երգոցն, զի մի եւեթ օրինակ ունիմք»: Սարգիսեան չի գոհանար պարզապէս ձեռագիրը օրինակել տալով, այլ կը յանձնարարէ «փոյթ կալլիք, աղաչեմ, զի որ օրինակէն, մի զանց արասցէ գրադպատելն ընդ բնագրին»⁴¹: Այս տրուած պատուէրին առաջին ու խղճամիտ հետեւողը ինքն է, Հ. Ներսէս Սարգիսեան:

ԱՏԱՓԱԶԱՐ

Արմաշի վանքէն վեց ժամ հեռու փոքրիկ աւան մըն է Ատափաղար, ուր կը հասնին մեր երկու ուղեւորները Յուլիս ամսուն սկիզբը, ու կ'իջեւանին Հ. Յովհաննէս Սորկունեան Մխիթարեան վարդապետին եղբոր՝ Կարապետ աղայի տունը: Վարժապետի մը քով կը տեսնեն տասի չափ ձեռագիրներ, մեծ մասամբ Տէր-Կարապետեանի գրչութիւն, որոնց ընդօրինակութիւնները տարիներ առաջ նոյն ինքն Տէր-Կարապետեան զրկած էր Ս. Ղազար: Սարգիսեանի ուշադրութիւնը կը գրաւէ «Միխայէլ ասորի մի էր ի նոսա բոլորգիր, հանդերձ ընդարձակ բառարանաւ, որ եւ գնեալ»⁴² կը յանձնէ Կարապետ աղայի, որպէսզի հասցնէ Պոլիս ու անկէ Ս. Ղազար:

ՔԵՕԹԱՀԵԱ

Յետ շրջադայելու բիւթանացիներու գաւառը, Օգոստոս ամսուն կը մտնեն Քէօթահեա՝ նոր յուսախարութիւններու առջեւ ելլելու համար: Պիլէճիկի մէջ լսած էին թէ Կուտինայի առաջնորդը ունի բա-

41. Սարգիսեան Հ. Ն. Արմաշէն, 27 Յունիս 1844ին, առ Հ. Գէորգ Հիւրմուզեան, Պոլիս:

42. Սարգիսեան Հ. Ն. Կուտինայէն, 3 Օգոստ. 1844ին, առ Արքահայրն Սուրբիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

լալան թիւով ձեռագիրներ, որով կը համակերպին «տառապանաց ճանապարհին», որոց յանձն առեալ եմք տանել մտադիր»⁴³: Բայց աւել. նոյն օրերուն այնքան բուռն էր երկու համայնքներու միջեւ պայքարը, որ Սարգիսեան կը վարանի գործել: Միւս կողմէ սակայն ձեռագիրները չկարենալ տեսնելուն համար «հալիմ եւ մաշիմ» կ'ըսէ, մանաւանդ որ առաջնորդն ալ բացակայ էր քաղաքէն, ու կը գտնուէր մօտակայ դիւղ մը՝ եկեղեցիի մը շինութեան պատճառով:

Ձեռագիրները տեսնելու փորձը անյաջող անցած էր: Տպաւորուած քաղաքացիներու յետին աղքատութենէն, կը դիմէր տեղւոյն մանուկներուն վրայ, որոնք զուրկ կը թուէին՝ մնացած էին փողոցները. հետամուտ կ'ըլլայ հաւաքել խումբ մը մանուկներ, որպէսզի ղրկէ Վենետիկ: Երբ այս փորձն ալ անյաջող կ'անցնի, մեր երկու առաքեալները Օգոստոսի արեւուն տակ կը շարունակեն ճամբանին:

ԱՆԿԻՒՐԻԱ

Օգոստոս ամսուն երկրորդ կէսին Հ. Ներսէս եւ Հ. Գրիգոր Անկիւրիա են, քննելու եւ տեղագրելու համար քաղաքին հնութիւնները: Անուանի էր Աստուածածին կոչուած վանքը, շինուած քաղաքէն մէկ ու կէս ժամ հեռաւորութեան վրայ: Բայց ուր որ ձեռք զարնէին՝ կը հանդիպէին փուշի եւ տատասկի. «զգրատունն հանդերձ առաջնորդարանան կնքեալ գտաք, կը դրէ Սարգիսեան, զի առաջնորդն չէր անդ, այլ չըլէր ի թեմս իւր. ոմանք բաղում ինչ կան ասէին ի դրեանց, իսկ այլք չափաւորեն իւր թէ մեծաւ մասամբ տպագիրք իցեն, որպէս ի մենաստանին Արմաշու, կողոպուտք ի ննջեցեալ քահանայից»⁴⁴:

Շատ խեղճ ու անկեալ վիճակի մէջ կը գտնեն Անկիւրիոյ ու յաջորդաբար Մարգուանի վանքերու բնակութեան շէնքերը. մտքերին կը թռչի հեռուն, Վենետիկ, Ս. Ղազար, ու համեմատութիւն մը ընելով երկուքին միջեւ, պալատի եւ հիւղի կը նմանցնեն ըսելով. «ընդ տեսանելիս զայսոսիկ՝ ընդ այն միայն խնդամ, զի երանելի նախահայրն մեր Մխիթար, վսեմ եւ ազնուական դադափարօքն՝ մեծանայ յոյժ յոյժ ի միտս իմ առաւել քան զոր կարէի ածել զմտաւ»⁴⁵:

Նոյն շրջանին Անկիւրիոյ տնտեսականը խեղճ վիճակի մէջ էր. Յիսիի գործածութեան նուազումով՝ ժողովուրդը մատնուած էր աղ-

43. Սարգիսեան Հ. Ն. Կուրինայէն, 3 Օգոստ. 1844ին, առ Հ. Գէորգ Հիւրմիւղեան, Պոլիս:

44. Սարգիսեան Հ. Ն. Եւդոկիայէն, 20 Հոկտ. 1844ին, առ Աբրահայրն Սուքիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

45. Անդ:

քատութեան, որով «եւ դատարկանայ քաղաքն օր ըստ օրէ»⁴⁶: Աղքատութիւնը կ'աղղէ մտաւոր մակարդակին վրայ, մանաւանդ նոր սերունդին, որոնք հակառակ իրենց բնական ուղիմութեան, չգտնելով կրթական յարմար միջավայր, կը մնան անմշակ ու խոպան մտքով:

Բացի չքաւորութենէն, հոգեւորականներու եւ աշխարհականներու միջեւ անընդհատ կռիւներն ու վէճերը աւելի եւս արգելք կը դառնան հայ դպրութիւն կազմակերպութեան, որովհետեւ «պայծառանայր քաղաքս ամենայն կարգաւորութեամբ եւ ուսմամբ, եթէ քահանայից ամենեցունց եւ աշխարհականաց միտք եւ խորհուրդ ի մի նպատակ հայէր, երկպառակութիւն բնաւ չերեւէր ի նոսա»⁴⁷: Նոյն օրերուն ամէնէն աւելի կը փայլէր գաղղիացի Եւգինիոս Պոռէ հայասէրին հիմնած վարժարանը, ուր տիրացու Աբէլեան կը դասաւանդէր հայերէն, Ֆրանսերէն, իտալերէն լեզուները. նիւթական եկամուտներու սակաւութեան պատճառով այս վարժարանն ալ ժամանակի ընթացքին կը հաւասարի միւս վարժարաններու մակարդակին:

15 օր ամբողջ կը մնան Անկիւրիա, ուր «միօրինակ աշխարհականք եւ քահանայք պատուեցին զմեզ մեծաւ հիւրասիրութեամբ», որոնք յոգնած ու զղուած իրարու հետ պօղոսեան եւ ապօղոսեան խնդիրներէ «ասէին ցմեղ. երանի թէ ի ձեռն միաբանութեանդ կառավարէր եկեղեցականութիւն քաղաքիս եւ ուսմանցն յառաջադիմութիւն»⁴⁸:

ԱՄԱՍԻԱ

Անցնելով Գալէճիկ, Սիւնկիւրլիւ, Չօռում, Մարգուան, կը հասնին Ամասիա, ուր պիտի մնան գրեթէ ամիս մը: Ամասիոյ հնութիւնները կը յափշտակեն մեր ուղեւորներու սիրտն ու հոգին, մանաւանդ Սարգիսեանինը, որ տպաւորուած այդ հրաշալիքներէն, ամիսներ վերջ դեռ պիտի յիշէ զանոնք դրելով. «քան զամենայն առաւել սիրելի են ինձ Ամասիոյ հնութիւնքն, ձեռակերտք մերոյն Միհրդատայ. ոչ այնքան ճարտարապետութեան արհեստին կարմանալի եղեալ, քան թէ յերկայնմութենէ, յորս զամենայն ճիգն թափեալ է այլն անջնջելի յիշատակ յաշխարհի թողուլ. եւ եթող նա որպէս կան եւ մնան ցայսօր ժամանակի, զի զերեսօք ապառաժ լերինն բարձու կռահահարեալ է եւ շիրիմս քարակոփս եւ անապարհս սանդխաճես եւ տունս քարայրս գանձուց կոռածոյս յօրինեալս, համամամն ձեռա-

46. Անդ:

47. Անդ:

48. Անդ:

կերտացն Շամիրամայ ի վան, որպէս ասէ պատմութիւնն, որ է յառաջարան վկայարանութեան թէոզորոսի»⁴⁹:

Մարզուանի եւ Ամասիոյ եկեղեցիներուն մէջ կը տեսնեն հարիւրաւոր դրչադիրներ, մեծ մասով Ճաշոց, Մաշտոց, Յայսմաւուր եւ Աւետարան: Մարզուանի ձեռագիրներուն մէջ նորութիւն էր Աղօթագիրք մը, որ իսկոյն «զամենայն նորագիւտս գաղափարեցաք անտի, թուով աւելի քան զքառասուն»⁵⁰:

ԹՈՒՔԱԴ

Յիշատակութեան արժանի է Սուրբ Աննա մենաստանը կատարուած այցելութիւնը, ուր բազմաթիւ ձեռագիրներու մէջ Սարգիսեանի ուշագրութիւնը կը գրաւէ 1178 թուականին գրուած Մեկնութիւն Յովնանու Աւետարանին, օրինակուած ընտիր բոլորգրով Սարկաւազ վարդապետի Սարգիս աշակերտի ձեռքով: Սարգիսեան փափաք կը յայտնէ ու ձեռագիրը ընծայ ստանալով կը ղրկէ Վենետիկ:

ՍԵՐԱՍՏԻԱ

Սերաստիա հասնելով կ'ուղղուին Ս. Նշան վանքը, յոյսով որ պիտի կարենան տեսնել ձեռագիրները. սակայն հոն ալ վանքին առաջնորդը կնքելով գրատունը մեկնած էր Պոլիս: Կ'իմանան թէ վանքը ունի 300ի չափ հատորներ, որոնց մէկ մասը, հաւանաբար եկեղեցական բնոյթ ունեցող գիրքերը, վանքին նախկին առաջնորդ Յովհաննէս վարդապետ՝ ամփոփած է եկեղեցիին դմբէթը ու պատով ծածկած, «զի մի, ասէ, ի ձեռս տգիտաց անկեալ կորիցէ»⁵¹:

Սերաստիա անունը սիրելի է ամէն Մխիթարեանի: Մեր երկու ուղեւորներն ալ մտնելով իրենց երանաշնորհ հիմնադրին ծննդավայրը, չէին կրնար չհետաքրքրուիլ անոր հետքերով, նշխարներով. եւ իրապէս «հարցեալ զտի պառաւ մի իննսնամեայ յազդականութենէ նախահօր մերոյ, կը գրէ Սարգիսեան, եւ ըստ վկայութեան նորա եւ այլոց՝ Մխիթար Աբբայ հօրաքեռորդի է նորա»⁵². կը գտնեն նաեւ երկու երիտասարդներ, նոյնպէս ազգական Մխիթար Աբբահօր:

6

49. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 17 Մարտ 1845ին, առ Հ. Յովհաննէս Սորկուհեան, Փարիզ:

50. Սարգիսեան Հ. Ն. Ամասիայէն, Հոկտ. 1844ին, առ Հ. Գէորգ Հիւրմիւզեան, Պոլիս:

51. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 1 Յունուար 1845ին, առ Աբբահայրն Սուրբիաս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

52. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 17 Մարտ 1845ին, առ Հ. Գաբրիէլ Այվազովսկի, Վենետիկ:

Հետաքրքրական է լսել Մխիթար Աբբահօր մասին Սերաստիա պահուած աւանդութիւն մը, «որ լուայ ի բուն հայոց, ի ծերունեաց, աւանդութեամբ հասեալ առ նոսա»⁵³: Մխիթար փոքր հասակին կը յանձնուի Ս. Նշան վանքը, նախնական ուսումները առնելու համար: Մանուկը այնքան տկար է յիշողութեամբ, որ անկարող է երկու բառ պահել միտքը, այնպէս որ շարունակ կը նախատուի իրեն հասակակիցներէն: Մանուկը գիտակից իր մտքի սահմանափակ ըլլալուն, խոնարհ հոգիով կ'իյնայ Տիրամօր ոտքը. թմրութիւն մը կ'ունենայ, կը տեսնէ Ս. Կոյսը, որ կ'երկարէ իրեն խաղողի ողկոյզ մը ըսելով. «Առ եւ կատարեսցին խնդրուածք քո»: Մանուկը կը սթափի, ու այդ օրէն կը բացուին յիշողութիւնն ու միտքը, ուսումի մէջ գերազանցելով իր բոլոր ընկերները⁵⁴:

* * *

Այսպէս ահա կ'աւարտի ուղեւորութեան առաջին հանգրուանը, Զմիւռնիայէն Տրապիզոն. ուղեւորութիւն մը որ չի տար պատուած արդիւնք. կը կարծէին հանդիպիլ հարիւրաւոր ու հազարաւոր ձեռագիրներու, եւ ահա հաղիւ տասնեակ մը օրինակներ ձեռք ձգած էին, յետ այնքան նեղութիւններու եւ զրկանքներու:

Այս առաջին ուղեւորութեան գլխաւոր տառապանքը կ'ըլլայ աղքատութիւնը, դրամի պակասը, ինչ որ պատճառ կ'ըլլայ սահմանափակելու զանազան ծրագիրներ: Միաբանութիւնը հակառակ իր տընտեսական դժուարութիւններուն, պարզապէս հայրենասիրական ըզրացումներէ մղուած՝ յանձն առած էր այս մեծ զոհողութիւնը, ճամբայ հանելով երկու միաբաններ դէպի հայրենի ափեր. սակայն տարի մը ետք, չկարենալով տոկալ տնտեսական տաղնապին՝ կը ստիպուէր ետ կանչել անոնցմէ մէկը, մանաւանդ թէ երկուքը. «գանդատ ունի Սրբութիւնդ զանբաւութեան ծախուցդ, կը գրէ Սարգիսեան՝ Աբբահօր, զոր արարաք զայս ամ. զնոյն եւ ես վկայեմ թէ արդարեւ անբաւ են, որում չկարէ տոկալ աղքատ Միաբանութիւնս, մինչեւ բազում անգամ գլուխ դիտոյ տուեալ ընդ Հ. Գրիգորի շուարեալ մըր նայաք հնարս գտանել սակաւութեան ծախուցն...: Խոստանալք մեզ երկոցունց յամին հաղար Ֆիորին, այլ այդ գումար դրամոց ամեւ երկոցունց յամին հաղար Ֆիորին, այլ այդ գումար դրամոց ամեւ երկոցունց յամին հաղար Ֆիորին էք դարձեալ թէ յանբաւական լինել հաղար Ֆիորինացն դարձիք ի վանս, սակայն ծանր է մեզ ծաղր կալ ամեւ նեցուն, եւ լսել թէ չինել սկսան եւ չկարացին կատարել... եւ ես որ միանգամ վասն ձեռագրաց ելի ընդ դուռն վանացս, հարկ է ան-

53. Անդ:

54. Անդ:

կը դնէ պանդոկապետին առջեւ, խնդրելով որ Աշխարհայի դիւղերը կարգաւ շարէ «Իրբեւ զքարինս տամայի. քար մի դնէր ի դետնի այրն՝ եւ կոչէր զանուն գեղջն, եւ կուշտ կուշտ ի բիր ականս հայէր, թէ զի՞նչ արդիւնս ծնանիցին կասկածանք նորա յերեսաց իմոց. զերեք-տասան խճիցն շարեաց եւ այլ եւս վեց եւ եկաց զանգէտ լինելն այլոց պատճառեալ»⁷⁰:

Կ'անցնի Կիւմիւշխանէ, կ'ուղէ նոյն կերպով ձեռք ձգել Մաչու-դայի դիւղերու անունները, հոն ալ զինքը լրտես կարծելով կը դըժ-ուարին պատասխանել. յանկարծ հայ մը ոտքի ելլելով «շուրջ զվայ-րօքն յածեցեալ զաչսն՝ զի մի՛ ոք ի տաճկաց դտցի անդ... ասէ. զոր ինչ լինելոց է թող լիցի, յուսամ ի Տէր զի ի ձեռն սոցա լինելոց է փրկութիւն աշխարհիս մերում, վասն որոյ ասեմ աներկիւղ»⁷¹, ու կը թուարկէ 48 դիւղերու անուններ⁷²:

(Շար. 1)

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

70. Անդ:

71. Անդ:

72. Հմմտ. Տեղագրութիւնք, էջ 66-87:

ՎԵՐԼՈՒԾՈՒՄԻ ՓՈՐՁ ՄԸ

Պ. ԴՈՒՐԵԱՆԻ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Գործերու վերլուծական այս փորձը քատերակամներով է որ կ'ու-ղենք սկսիլ. նախ՝ որովհետեւ Դուրեանն ալ ամէնէն առաջ քատերա-գիր բանաստեղծ մը յայտնուեցաւ կեանքին մէջ եւ յետոյ քնարեր-գակ մը, եւ երկրորդ՝ որովհետեւ իր գործին ամէնէն առկար կողմը կը կազմեն ատոնք, սկզբնաւորութիւն մը դրական կեանքի՝ որուն աւարտն եղան Քնարերգութիւններն ու Նամակները, ուր փնտռելու ենք հարազատ Դուրեանը:

1. ՏԱՐԱԳԻՐ Ի ՍԻՊԵՐԻԱ

Առաջինը՝ ժամանակագրական կարգի վրայ, Տարագիր ի Սիպե-րիան է, կոչուած հեղինակէն «Ողբերգութիւն ի մի արարուած»:
Մինչեւ 1959ի «Սիպիւք»ի յայտնութիւնը՝ անծանօթ մնացած էր կը-տորը. փառք Սիմոնեանին՝ որ պրպտեց, դտաւ եւ յայտնեց զայն: Կրնանք վստահօրէն ընդունիլ թէ այդ գործը Դուրեանինն է: Բայց կը ծագի իսկոյն տարակոյս մը. եթէ իրն է, ինչո՞ւ ոչ մէկ տեղ յիշատակուած է, ոչ իրմէ, ոչ առաջին հրատարակիչներէն եւ ոչ իսկ յիշատակուած է, ոչ իրմէ, ոչ առաջին հրատարակիչներէն եւ ոչ իսկ եղբորմէն, ու թաքուն պահուած է ցարդ անկիւն մը, իր ձեռագիր-ներու թղթածրարներուն մէջ...: Ս. Սիմոնեան տարակուսած է պահ-մը իրաւամբ անոր վաւերականութեան մասին, բայց հեղինակին դի-մը մէկ կողմէն, ստորագրութեան պէս յայտարարութիւն մը՝ միւս կողմէն գործին վերջը, յաջողած են հաստատելու անոր հարազա-տութիւնը: Ողբերգութեան վերջը կը կարդանք.

«Ես Պետրոս Դուրեան զողտրիկ քերթող մ'եմ,
որում «Տարագիր ի Սիպերիա»
ողբերգութիւն ի մի արարուած»:

Երբեակ սա տողերը եղական բան մը ունին իրենց մէջ, յիշատա-կարանի մը արձանագրութեան նմանող: Պատանի Դուրեան զուար-